ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/2827/02/24 | ք. Երևան
8 Մայիս 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա. Թումասյանի (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով թիվ ԵԴ2/2827/02/24 քաղաքացիական գործով պատասխանող «Հայկական ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Տ. Վարդազարյանի միջնորդությունը՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ,

ՊԱՐԶԵՑ

Դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԴ2/2827/02/24 քաղաքացիական գործն ըստ հայցի «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ Հայկական ատոմային Էլեկտրակայան ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող), ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի՝ ՀԱԷԿ ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ՝ «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) և որպես հետևանք՝ թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

03.05.2024 թվականին Պատասխանողի ներկայացուցիչ Տ.Վարդազարյանի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով Դատարան է ներկայացվել միջնորդություն, որով վերջինս վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը՝ հայտնել է, որ Դատարանի 18.04.2024թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով սահմանված կարգով գրավոր ընթացակարգով գործի քննության արդյունքում կայացվելիք դատական ակտի հրապարակման օր է սահմանվել 05.06.2024թ.:

Պատասխանողի ներկայացուցիչը նշել է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի՝ Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Միաժամանակ նշել է, որ տվյալ դեպքում www.gnumner.am կայքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը՝ «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու մասին, հրապարակվել է 18.04.2024թվականին, հետևաբար, 2024 թվականի ապրիլի 18-ից թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման գործընթացը կասեցված է:

Վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում:

Պատասխանողի ներկայացուցչի պնդմամբ տվյալ դեպքում հանրային շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման գործընթացը, հակառակ պարագայում վրա է հասնելու հետևյալ անդառնալի հետևանքը.

Մասնավորապես նշել է, որ ներկայումս կայանում 4 հովացման աշտարակներից գործող է ընդամենը 2 հովացման աշտարակ՝ թիվ 1-ը և թիվ 2-ը: Թիվ ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում պետք է իրականացվի «ՀԱԷԿ ՓԲԸ»-ի թիվ 2 հովացման աշտարակների ԾՊ-3,4 շրջանառու պոմպերի ճնշումային խողովակաշարերի փոխարինում: Տեղին է նշել, որ մղման խողովակաշարերի անսարքության դեպքում կայանը այլևս չունի պահուստային հովացման աշտարակ՝ իր սարքավորումներով:

Թիվ 2 հովացման աշտարակի ԾՊ-3,4 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի փոխարինման անհրաժեշտությունը պայմանավորված է շուրջ 42 տարվա շահագործման հետևանքով ֆիզիկական մաշվածությամբ և մետաղի քայքայվածությամբ, ինչի հետևանքով շահագործման ընթացքում պարբերաբար առաջանում են հերմետիկության խախտումներ և ջրի արտահոսքեր:

Կարևոր է համարել նշել, որ խողովակաշարերի թերությունների վերացումն առանց շրջանառու պոմպերի անջատման հնարավոր չէ, ինչը պահուստային հովացման աշտարակի բացակայության պատճառով բերում է կայանի կողմից գեներացվող էներգիայի հզորության իջեցման և որպես դրա հետևանք՝ մեծ ֆինանսական

կորուստների, որն էլ ուղղակի ազդեցություն ունի ամբողջ հանրապետության էլեկտրաէներգիայի սակագների վրա:
Այս համոզմունքի համար հիմք է հանդիսանում «ՀԱԷԿ» ՓԲԸ ՎՆԿԲ /վերանորոգումների նախապատրաստման և կազմակերպման բաժին/ պետի տեղեկանքը /կցվում է/:
Նշել է, որ խողովակաշարերի փոխարինման աշխատանքները ՊՆՎ-2024-ի ընթացքում իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ ՊՆՎ ավարտից հետո կայանը պարտադիր պետք է ունենա 2 հատ շահագործման պատրաստ հովացման աշտարակ, այնինչ գնման գործընթացի կասեցման հետևանքով ժամկետները հոսում են, սակայն աշխատանքներ չեն կատարվում, որից տուժում է ոչ միայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, այլ նաև հանրությունը, քանի որ թիվ 2 հովացման աշտարակի ԾՊ-3,4 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի փոխարինման աշխատանքների չկատարման հետևանքով ամեն վայրկյան կարող է տեղի ունենալ վթար, որն էլ իր հերթին կհանգեցնի կայանի կանգի կամ էներգաբլոկը ուշ կմիանա էներգահամակարգին, ինչի հետևանքով էլ հոսանքի արտադրության օգտակար գործողության գործակիցը կնվազի ավելացնելով ծանր ֆինանսական բեռը երկրի տնտեսության վրա: Մասնավորապես ՊՆՎ-2023 /պլանային նախազգուշական վերանորոգում/ աշխատանքներից հետո ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկը էներգահամակարգին միացել է 23 օր ուշացումով, ինչի հետևանքով կայանը կրել է շուրջ 3 մլրդ. չափով ֆինանսական կորուստներ՝ չարտադրված էներգիայի պատճառով չստացված եկամուտի մասով: Արդյունքում՝ փաստի առթիվ 2023 թվականի հոկտեմբերի 18-ին ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ նասի 2-րդ կետի հատկանիշներով նախատեսվել է թիվ 48-0149-23 քրեական վարույթը:
Պնդելով, որ գնման գործընթացի կասեցումը ոչ միայն չի բխում հանրության շահերից, այլ նաև վնասում է դրանց, ինչի հետևանքով անհրաժեշտ է վերացնել գնման գործընթացի կասեցումը և կանխել հանրության շահին պատճառվելիք վնասը՝ Պատասխանողի ներկայացուցիչը խնդրել է որոշում կայացնել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ:
Միջնորդությանը կից ներկայացվել է «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության Վերանորոգումների նախապատրաստման և կազմակերպման բաժնի պետ Օ.Ն.Գևորկյանի կողմից տրամադրված տեղեկանքը:
Վերոնշյալ միջնորդությունը հայցվորին ուղարկելու վերաբերյալ միջնորդությանը կից ներկայացվել է էլեկտրոնային փոստից քաղվածք, որից պարզ է դառնում, որ հայցվոր «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ՍՊ ընկերությանը, հայցվորի ներկայացուցիչ Լևոն Օհանյանին և երրորդ անձ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերությանը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է գնման գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն վերջիններիս կողմից որևէ դիրքորոշում Դատարան չի ներկայացվել:
Դատարանն, ուսումնասիրելով միջնորդությունը և կից ներկայացված փաստաթուղթը, արձանագրում է հետևյալը.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ

դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:
Վերը նշված իրավանորմից հետևում է, որ այն դեպքում, երբ առկա է հանրային կամ պաշտպանության, ազգային անվտանգության շահ, որից ելնելով անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, ապա Դատարանը կողմի գրավոր միջնորդության հիման վրա, կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում:
Դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԴ2/2827/02/24 քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում կատարվելիք խողովակաշարերի փոխարինման աշխատանքների իրականացման ժամկետը նախատեսվել է սկսել ՊՆՎ-2024-ի ընթացքում՝ 2024 թվականի մայիսի 15-ից սկսած, իսկ սույն քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 05.06.2024 թվականը:
Դատարանը հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում Պատասխանողի ներկայացուցչի միջնորդությամբ նշված հանգամանքների և կից ներկայացված փաստաթղթի ուսումնասիրությամբ հիմնավորվում է հանրային շահի առկայությունը՝ պայմանավորված խողովակաշարերի փոխարինման աշխատանքները ՊՆՎ-2024-ի ընթացքում իրականացնելու անհրաժեշտությամբ:
Փաստերի նման դասավորվածության պայմաններում Դատարանը գտնում է, որ սույն դեպքում թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը չվերացնելու և հիշյալ ընթացակարգի շրջանակներում նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետներում չիրականացվելու դեպքում առկա է Հայկական ատոմային Էլեկտրակայանի բնականոն գործունեության խաթարման, դրանով պայմանավորված նաև ՀՀ տնտեսության վրա ֆինանսական զգալի ազդեցության հնարավոր ռիսկ, հետևաբար, ելնելով վերոնշյալ նորմի տրամաբանությունից, Դատարանը գտնում է, որ Պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը հիմնավոր է, ուստի պետք է վերացնել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ, 234.11-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Պատասխանող «Հայկական ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Տ. Վարդազարյանի միջնորդությունը բավարարել:

2. Վերացնել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ **Արմինե Թումասյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Digitally signed by
ARMINE TUMASYAN 7111860578
Date: 2024.05.08 16:08:54